

**«Մենք նոր զինատեսակների ստեղծման նախագծեր, փորձարկումներ ենք անում».
Սամվել Հարությունյան**



Գիտությունը մի բաց համակարգ է ու եթե ցանկանում ես այնտեղ լուրջ արդյունքներ ունենալ, պետք է միջազգային համագործակցությունը պահես շատ բարձր մակարդակի վրա:

Այս կարծիքին է Գիտության կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը, որը Newarmenia.am-ի հետ զրույցում նշեց նաև, որ 2008թ. սկսած ունեցել են միջազգային բազմաշերտ համագործակցություն: «Քանի որ Խորհրդային Հայաստանը ԽՍՀՄ մաս էր կազմում, մենք ինքնուրույն չէինք և իրավունք չունեինք տարբեր երկրների հետ աշխատել, այդ հարցը լրիվ կենտրոնն էր կարգավորում: Անկախությունից հետո էլ՝ մինչև 2008թ., Հայաստանն արտասահմանյան որևէ երկրի հետ գիտության ոլորտում պետական մակարդակով որևէ համաձայնագիր չի ունեցել: 2008թ. սկսած, երբ ստեղծվեց գիտությունների խորհուրդը, մենք ստորագրել ենք ավելի քան 40 միջազգային համաձայնագիր: Իսկ այսօր արդեն աշխարհի 12 երկրի հետ համատեղ ծրագրեր ունենք, որոնց թիվը գերազանցում է 100-ը: Մենք այսօր աշխատում ենք Շվեյցարիայի Իտալիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, ՌԴ-ի, Բելառուսի, Միացյալ Նահանգների հետ հիմնականում բնական գիտության ոլորտում, իսկ Իտալիայի դեպքում՝ նաև հումանիտար գիտության՝ հայագիտության, արվեստի, պատմագիտության և այլ ոլորտներում», - ընդգծեց նա:

Ըստ Սամվել Հարությունյանի՝ միջազգային համագործակցությունը հսկայական արդյունք տվեց. Հայաստանին ճանաչում են ամեն տեղ, անդամակցում ենք գրեթե բոլոր միջազգային կառույցներին, երբ նախկինում որևէ կառույցի անդամ չէինք: «Մասնավորապես, միջազգային գիտատեխնիկական կենտրոնի լիարժեք անդամ ենք, ես այնտեղ ներկայացնում եմ Հայաստանը, նաև տնօրենների խորհրդի անդամ եմ: Մենք նաև Դուգնայի միջուկային հետազոտությունների միացյալ կենտրոնի անդամ ենք, և կրկին ես եմ ներկայացնում Հայաստանը: Հայաստանը նաև շատ ճանաչված ՋԵՕ միջազգային կազմակերպության լիիրավ անդամ է, այն զբաղվում է երկրաբանական ուսումնասիրություններով: Մենք նաև Իտալիայի տեսական ֆիզիկայի միջազգային

կենտրոնի, Բկրանտոի անդամ ենք, այնտեղ ընդգրկված է 7 պետություն: Այն զբաղվում է տիեզերական միջուկային ֆիզիկայով, մեր երկրում ունենք տարածաշրջանային գրասենյակ: Նաև ԱՊՀ երկրների գրեթե բոլոր կառույցներին ենք անդամակցում և շատ ակտիվ մասնակցության արդյունքում Հայաստանը շատ ճանաչված, հարգված պետություն է ամբողջ աշխարհով մեկ, և մեզ համարում են գիտության երկիր»,- վստահեցնում է Գիտության պետական կոմիտեի նախագահը:

Նա տեղեկացրեց, որ Չինաստանը մեզնով շատ հետաքրքրված է. մեզ հետ համատեղ ծրագրեր ունի, իսկ մենք նրանց հետ սեյսմիկ անվտանգության ոլորտում շատ լուրջ ծրագրեր ենք իրականացնում: «4 ամիս առաջ Պեկինում էի, ստորագրեցինք համաձայնագիր, որով Հայաստանը պետք է միանա սեյսմիկ անվտանգության ասիական ցանցին: Տարբեր երկրներում տեղադրում են կայաններ, որոնց միջոցով կարողանում են գուշակել, թե որտեղ կարող է երկրաշարժ լինել: Քանի որ Հայաստանը մտել է այդ ցանցի մեջ, արդեն 1-1.5 միլիոն դոլարի սարքավորում են բերել, որոնց մի մասը տեղադրված է Սպիտակ քաղաքի տարածքում: Ես օրերս այնտեղ էի և տեղեկացա, որ հնարավոր է սարքերի միջոցով տվյալներ գրանցել, ինչ-որ ուսումնասիրություններ անել ու կանխատեսել երկրաշարժը: Մենք այստեղից, օրինակ, կայանների օգնությամբ կարողանում ենք Չիլիի երկրաշարժը ֆիքսել: Շատ լավ համագործակցում ենք ՌԴ-ի հետ և հասել ենք ֆանտաստիկ արդյունքների հասկապես ֆունդամենտալ գիտության ոլորտում, աշխատում ենք նաև Բեռառուսի հետ: Գերմանիայի հետ բավականին աշխատանքներ ենք տանում, ֆեդերալ իշխանությունների հետ ստորագրեցինք համաձայնագիր, արդեն 3-4 անգամ մրցույթ ենք արդեն իրականացրել: Ֆրանսիայի մի ճանաչված կենտրոնի հետ համատեղ ծրագրեր ենք իրականացնում: Իսկ Քենդն ինստիտուտը գերմանական և շվեյցարական երկու արագացուցիչների համագործակցության արդյունքն է, ինստիտուտի սարքավորումների գրեթե 80 տոկոսը նվեր ենք ստացել, մոտավորապես 20 միլիոն եվրոյի արժողությամբ նվիրատվություն է եղել: Ինստիտուտ, որը ստեղծվել է եվրոպական նվիրատվության հաշվին, Հայաստանը շատ քիչ գումարներ է ծախսել՝ մոտավորապես 2-3 միլիոն, և ինստիտուտն այսօր դարձել է տարածաշրջանային գործոն, ու այս տարվանից այնտեղ Գերմանիայից ուսանողներ են գալու կրթական կրեդիտներ ստանալու: Աշխատելով այս սարքերի վրա՝ դասեր են անում, և դրա համար մեզ վճարելու են»,- հպարտությամբ ասում է Սամվել Հարությունյանը:

Ըստ նրա՝ Ֆիզիկայի ինստիտուտն այսօր աշխարհի 20-25 երկրների հետ համագործակցում է և մասնակցություն ունենում միջազգային շատ էքսպերիմենտների: «Ինստիտուտ, որտեղ ստեղծվեց միջուկային բժշկության կենտրոնը, դրվեց արագացուցիչ, որը նաև բժշկական նշանակություն ունի ուռուցքային հիվանդությունների կանխարգելման, մշակման հարցում ու նաև այլ խնդիրներ պետք է լուծի: Համագործակցում ենք Ճապոնիայի և Հարավային Կորեայի հետ, մոտ ապագայում, երևի թե, համաձայնագրեր կստորագրվեն, բավականին աշխատանքներ են

տարվում Միացյալ Նահանգների հետ, Հայաստանում ստեղծել ենք միջուկային կրիմինալիստիկայի տարածաշրջանային կենտրոն, որն արդեն գործում է, ստեղծվել է համատեղ լաբորատորիա: Պետական դեպարտամենտը շատ խիստ շահագրգռված է այս ծրագրերով, մի քանի օր առաջ հանդիպում ունեցանք նրանց ծրագրերի համակարգողներից մեկի ներկայացուցչի հետ: Նրանք Հայաստանը դիտարկում են որպես այդ ոլորտում այս ռեգեոնի հայտնի երկիր, քանի որ Հայաստանը միջուկային ֆիզիկայի մեջ ունի շատ լուրջ հաջողություններ: Ցանկանում ենք Հայաստանում ստեղծել Միացյալ Նահանգների դուստր հիմնարկություն՝ մետրալոգիայի կենտրոն, Վաշինգտոնում էլ անցյալ տարի ստանդարտային ազգային ինստիտուտի հետ լուրջ հարաբերություններ ենք հաստատել՝ պայմավորվածություն ձեռք բերելով մոտակա ժամանակներում Հայաստանում ստեղծել նմանատիպ կենտրոն: Գիտական ստանդարտները սարքերի, ապրանքների, ծառայությունների ստանդարտներ են, եթե դրանք չունեն, քո ապրանքանիշը չես կարող վաճառել: Եթե կարողանանք դուստր հիմնարկությունը Հայաստանում բացել, կդառնանք ամբողջ տարածաշրջանի սպասարկող կենտրոն, ինչը Հայաստանին կբերի ահռելի գումարներ, քանի որ Միացյալ Նահանգները մեզ վստահում է, շատ լուրջ է վերաբերվում և համագործակցում է մեզ հետ»,- վստահեցրեց Սամվել Հարությունյանը:

Ինչ վերաբերում է ռազմական ոլորտին, ապա Սամվել Հարությունյանի խոսքով, ունենք կառույց՝ ռազմարդյունաբերության կոմիտե, որը հիմա գտնվում է ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Հակոբ Արշակյանի նախարարության ներքո:

«Դրան առնթեր ունենք ռազմարտադրության հանձնաժողով, որի ղեկավարը վարչապետն է, իսկ վարչապետի հանձնաժողովին առնթեր գործում է նաև ռազմատեխնիկական խորհուրդ, որի նախագահը ես եմ: Մենք նոր զինատեսակների ստեղծման նախագծեր, փորձարկումներ ենք անում, այդ անօդաչու թռչող սարքերի մասին որ խոսում են, լրիվ մեր հանձնաժողովն է անում այդ ամենը: Ահռելի աշխատանքներ ենք կատարել: Հիմա մենք այն փուլում ենք գտնվում, որ որոշ զինատեսակներ, որոնք մեր սեփական արտադրանքն են, գումար լինելու դեպքում կարող ենք լուրջ արտադրություն դնել և արտադրել Հայաստանում և, ինչու ոչ, վաճառել դրսում: Այսինքն՝ այդ ոլորտում մենք ահագին հաջողությունների ենք հասել, բայց դեռ բավականին գործ կա անելու»,- ասաց ՀՀ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը: